



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 45953 գործարքներ, որոնց քանակը 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 55.5%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 8.8%-ով:

2004թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 19061 օտարման գործարքների 91.5 %-ը կազմել են առուվաճառքները, 7.8%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 43.2%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. առաջին կիսամյակում, 2003թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 40.1%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.2%-ով: 2004թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 6613 առուվաճառքի գործարքների 67.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2003թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 15.7%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 17.7%-ով:

2004թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները,

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. 1-ին կիսամյակում համարժեք է 558.2 դրամի/

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. առաջին կիսամյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		2003թ. առաջին կիսամյակ	2004թ. առաջին կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ
Կենտրոն	250.0-970.0	369.4	438.8	400.4
Արաբկիր	200.0-560.0	257.8	341.2	299.7
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	151.3	211.1	188.0
Նոր-Նորք	115.0-250.0	125.2	175.4	146.3
Ավան	120.0-190.0	118.4	166.5	145.7
Էրեբունի	120.0-300.0	132.7	172.6	157.3
Շենգավիթ	120.0-250.0	129.9	189.4	157.2
Դավթաշեն	130.0-260.0	149.1	211.4	186.6
Աջափնյակ	120.0-250.0	128.7	189.2	163.5
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	128.9	187.7	153.6
Նուբարաշեն	65.0-100.0	57.6	74.0	69.2
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	159.0	214.3	187.9

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. առաջին կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 34.8%, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 14.1%-ով:

2004թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում :

2004թ. առաջին կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2799 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 35.5%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.3%-ով:

2004թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. առաջին կիսամյակում /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			2003թ. առաջին կիսամյակ	2004թ. առաջին կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ
Արագածոտն	<i>Աշտարակ</i>	22.0-95.0	61.6	63.2	62.7
	<i>Ապարան</i>	18.0-40.0	27.0	29.8	27.3
	<i>Թային</i>	18.0-40.0	24.2	28.1	25.2
Արարատ	<i>Արտաշատ</i>	22.0-88.0	53.4	55.5	54.6
	<i>Մասիս</i>	20.0-90.0	53.9	56.9	54.4
	<i>Վեդի</i>	20.0-45.0	30.7	35.6	31.7
	<i>Արարատ</i>	22.0-50.0	31.0	34.3	31.5
Արմավիր	<i>Վաղարշապատ</i>	35.0-102.0	80.0	86.2	84.5
	<i>Արմավիր</i>	21.0-58.0	44.1	48.5	45.6
	<i>Մեծամոր</i>	17.0-50.0	30.4	31.6	30.9
Գեղարքունիք	<i>Սևան</i>	20.0-50.0	30.4	31.9	30.6
	<i>Գավառ</i>	20.0-50.0	29.8	31.9	30.4
	<i>Մարտունի</i>	18.0-38.0	28.8	31.3	29.6
	<i>Վարդենիս</i>	10.0-21.0	16.8	17.3	17.3
	<i>Ճամբարակ</i>	13.0-30.0	15.7	17.8	16.8
Լոռի	<i>Վանաձոր</i>	30.0-90.0	60.0	62.2	61.3
	<i>Ստեփանավան</i>	20.0-48.0	31.9	34.0	33.3
	<i>Սյիտակ</i>	17.0-40.0	23.1	29.5	24.0
	<i>Ալավերդի</i>	15.0-40.0	25.0	25.7	25.5
	<i>Տաշիր</i>	15.0-28.0	18.9	21.3	19.4
Կոտայք	<i>Աբովյան</i>	40.0-110.0	79.9	86.2	84.1
	<i>Նոր Հաճն</i>	35.0-75.0	50.8	55.9	52.2
	<i>Բյուրեղավան</i>	15.0-45.0	34.9	36.5	35.2
	<i>Եղվարդ</i>	28.0-55.0	39.8	42.7	40.6
	<i>Հրազդան</i>	18.0-55.0	29.9	33.8	30.9
	<i>Ծաղկաձոր</i>	22.0-95.0	74.4	76.6	75.8
	<i>Չարենցավան</i>	13.0-55.0	30.4	33.7	31.1
Շիրակ	<i>Գյումրի</i>	30.0-100.0	66.5	72.2	71.8
	<i>Արթիկ</i>	17.0-45.0	24.9	27.1	25.3
	<i>Մարայիկ</i>	15.0-33.0	23.0	25.3	23.7
Սյունիք	<i>Գորիս</i>	21.0-45.0	28.9	32.0	29.7
	<i>Կապան</i>	18.0-52.0	28.2	31.3	29.3
	<i>Սիսիան</i>	17.0-37.0	27.1	30.2	27.6
	<i>Մեղրի</i>	18.0-58.0	24.9	25.3	25.2
	<i>Ագարակ</i>	18.0-50.0	20.1	25.1	23.3
	<i>Քաջարան</i>	13.0-30.0	17.8	18.7	18.5
Վայոց Ձոր	<i>Վայք</i>	15.0-48.0	34.5	35.3	35.3
	<i>Եղեգնաձոր</i>	20.0-58.0	46.1	47.0	46.9
	<i>Ջերմուկ</i>	18.0-50.0	40.1	41.1	41.2
Տավուշ	<i>Դիլիջան</i>	15.0-54.0	35.6	36.7	36.2

	<i>Բջևան</i>	23.0-60.0	40.0	42.3	40.4
	<i>Բերդ</i>	15.0-43.0	28.6	29.5	29.3
	<i>Նոյեմբերյան</i>	15.0-45.0	26.5	27.0	26.8

2004թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների կիսամյակային աճը կազմել է 4.2%, իսկ տարեկան աճը՝ 7.4% :

2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2941 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 579, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2362: 2003թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 51.5%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 11.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 66.3%-ով: 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.9%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 13.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 18.9%-ով:

2004թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում :

2004թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. առաջին կիսամյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		2003թ. առաջին կիսամյակ	2004թ. առաջին կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ
Կենտրոն	255.0-990.0	372.2	452.8	411.3
Արաբկիր	205.0-580.0	260.5	346.8	303.4
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	153.0	212.9	190.1
Նորք-Մարաշ	120.0-390.0	284.7	326.4	304.6
Ավան	125.0-200.0	120.0	168.9	145.9
Էրեբունի	130.0-320.0	134.2	174.7	157.3
Շենգավիթ	120.0-260.0	131.2	190.3	158.1
Դավթաշեն	140.0-260.0	150.3	212.5	186.8
Աջափնյակ	125.0-230.0	130.5	191.1	163.1
Մալաթիա-Սեբաստիա	125.0-250.0	130.5	189.2	153.9
Նուբարաշեն	65.0-110.0	58.8	75.4	72.3
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-990.0	175.1	231.0	204.2

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 31.9 % -ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 13.1%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում

առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. առաջին կիսամյակում /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			2003թ. առաջին կիսամյակ	2004թ. առաջին կիսամյակ	2003թ. երկրորդ կիսամյակ
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	81.5	83.5	82.8
	Ապարան	20.0-60.0	37.9	38.9	38.8
	Թալին	20.0-65.0	27.6	29.8	28.1
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.1	62.0	61.8
	Մասիս	50.0-90.0	61.5	62.8	62.4
	Վեդի	25.0-65.0	35.7	38.2	36.3
	Արարատ	20.0-60.0	36.3	38.0	37.4
Արմավիր	Վաղարշապատ	70.0-120.0	83.6	90.1	89.6
	Արմավիր	35.0-90.0	51.0	53.1	52.3
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.0	36.4	36.4
	Գավառ	20.0-60.0	39.3	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	33.3	34.5	33.9
	Վարդենիս	15.0-45.0	20.6	21.3	21.3
	Ճամբարակ	15.0-40.0	18.3	20.0	19.4
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	66.9	69.4	68.7
	Ստեփանավան	15.0-60.0	32.5	34.5	33.6
	Սպիտակ	20.0-55.0	24.0	30.2	24.1
	Ալավերդի	15.0-50.0	25.7	26.1	25.9
	Տաշիր	15.0-40.0	19.4	21.9	19.9
Կոտայք	Արուսյան	60.0-120.0	90.8	92.9	92.4
	Նոր Հաճն	40.0-80.0	53.5	56.7	54.2
	Բյուրևական	25.0-60.0	37.5	38.5	38.2
	Եղվարդ	30.0-60.0	46.4	47.5	47.3
	Հրազդան	25.0-60.0	39.2	40.4	40.0
	Ծաղկաձոր	60.0-100.0	84.2	86.0	85.2
	Զարենցավան	20.0-55.0	33.1	34.9	33.4
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	88.3	91.3	90.8
	Արթիկ	15.0-50.0	27.7	28.9	28.7
	Մարալիկ	15.0-50.0	23.5	25.6	23.9
Սյունիք	Գորիս	20.0-60.0	30.9	33.3	31.6
	Կապան	20.0-60.0	30.1	32.4	31.1
	Միսիս	20.0-55.0	27.8	31.0	28.7
	Մեղրի	15.0-40.0	28.1	28.2	28.2
	Ագարակ	15.0-40.0	23.0	27.4	25.7
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	36.2	37.0	37.0
	Եղեգնաձոր	25.0-65.0	48.4	49.3	49.2
	Ջերմուկ	25.0-65.0	42.4	43.4	43.3
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.7	39.4	39.2
	Իջևան	30.0-65.0	40.4	42.9	41.2
	Բերդ	20.0-55.0	30.3	31.0	30.9
	Նոյեմբերյան	20.0-55.0	30.6	30.8	30.8

2004թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների կիսամյակային աճը կազմել է 2.1%, իսկ տարեկան աճը՝ 4.5%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 2528.19 հա /այդ թվում 170.47 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 2073.51 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 2490.91 հա հողերի /այդ թվում 166.44 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 2047.53 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 32.28 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ /այդ թվում 1.45 հա Երևանում/, որից 24.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 5.00 հա ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ /այդ թվում 2.58 հա Երևանում/, որից 1.98 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 705.51 հա, որից 617.61 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. առաջին կիսամյակում մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ԱՄՍԹԻՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտես. նշանակության հողերի		բնակավայրերի հողեր				գյուղատնտես. նշանակության հողերի		բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	88	7.14	111	83.09	0	0.00	310	25.91	41	16.88
Արագածոտն	7	49.30	2	0.09	9	1.34	226	131.76	126	17.65	9	1.83
Արարատ	190	412.91	478	51.67	15	5.36	543	204.71	283	24.57	0	0.00
Արմավիր	7	225.77	14	0.70	3	0.34	353	326.25	135	12.70	5	1.42
Գեղարքունիք	0	0.00	23	2.68	2	0.19	27	26.16	31	3.97	3	0.62
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	101	82.19	35	4.01	4	0.86
Կոտայք	50	101.42	31	2.96	3	3.23	648	245.41	466	47.74	9	4.91
Շիրակ	0	0.00	1	0.003	1	0.29	139	132.34	36	2.31	2	0.04
Սյունիք	1	0.10	1	0.20	0	0.00	32	35.21	5	0.42	0	0.00
Վայոց Ձոր	5	25.18	41	5.69	7	1.62	35	9.11	7	0.75	1	0.45
Տավուշ	1	1.20	5	0.28	2	0.02	41	38.52	10	0.76	0	0.00
Ընդամենը	261	815.88	684	71.41	153	95.48	2145	1231.66	1444	140.79	74	27.01

2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 4800 առուվաճառքի գործարքներ, որից 2406-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 2358-ը՝ բնակավայրերի 33-ը՝ արդյունաբերական օբյեկտների և 3-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ:

2004թ. առաջին կիսամյակում հողերի առուվաճառքներից 945-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 56-ը՝ Երևանում /6.07 հա/, իսկ 889-ը՝ մյուս մարզերում /937.64 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 258 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /804.68 հա/, 634-ը՝ /67.20 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 45-ը՝ հասարակական կառուցապատման հողեր /10.91 հա/, 5-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողեր /9.30 հա/ և 3-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր /51.52 հա/:

2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վաճառված 33 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 7-ը գրանցվել է Արմավիրի մարզում /6.36 հա/, 5-ը՝ Կոտայքի մարզում /5.33 հա /, 3-ը՝ Արարատի մարզում /6.20 հա/, 1-ը՝ Գևարքունիքի մարզում /4.60 հա/, 2-ը՝ Շիրակի մարզում /1.20 հա/ և 15-ը՝ / 33.02 հա / Երևանում:

2004թ. առաջին կիսամյակում, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 2406 գործարքներ, այդ թվում 258-ը՝ աճուրդով, 17-ը՝ դատարանի վճռով և 3-ը՝ ուղղակի վաճառքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	48.30	180.0	630.0	264.0	161	61.12	840.0	10000.0	2640.0
Ապարան						12	7.15	130.0	1150.0	395.0
Թալին	1	1.00	840.0	840.0	840.0	44	42.94	200.0	1680.0	435.0
Ծաղկահովիտ						7	19.91	170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	114	207.29	25.0	18095.0	1370.0	236	78.06	740.0	10000.0	2090.0
Մասիս	30	108.30	130.0	2430.0	450.0	118	43.08	400.0	8500.0	1265.0
Վեդի	44	87.35	54.0	2555.0	1220.0	182	79.98	450.0	7200.0	1295.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						82	81.23	650.0	4650.0	1335.0
Բաղրամյան	7	225.77	20.0	260.0	145.0	84	160.32	130.0	1200.0	490.0
Վաղարշապատ						182	79.31	980.0	14000.0	2235.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						7	1.70	420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						1	0.37	100.0	4000.0	735.0
Սևան						5	0.30	100.0	1000.0	385.0
Վարդենիս						13	19.14	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Ալավերդի						34	31.0	360.0	5500.0	860.0
Գուգարք						11	2.89	500.0	6000.0	1645.0
Սպիտակ						5	1.60	500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						36	22.91	180.0	4000.0	440.0
Տաշիր						14	23.24	100.0	400.0	255.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	36	13.15	130.0	1480.0	815.0	428	87.44	520.0	14000.0	5315.0
Եղվարդ	7	68.00	135.0	960.0	705.0	174	89.42	380.0	10000.0	3275.0
Հրազդան	6	19.05	130.0	1200.0	415.0	46	68.55	250.0	6000.0	810.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						98	84.64	550.0	1200.0	690.0
Ամասիա						8	17.07	80.0	525.0	190.0

Անի						14	14.64	240.0	800.0	280.0
Աշոցք						6	2.86	60.0	210.0	145.0
Արթիկ						12	11.22	140.0	800.0	295.0
Սյունիքի մարզ										
Գորիս						9	9.60	200.0	1600.0	430.0
Կապան	1	0.10	270.0	270.0	270.0			120.0	2000.0	330.0
Մեղրի						5	0.93	400.0	4240.0	340.0
Սիսիան						18	24.68	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	25.18	185.0	396.0	315.0	25	6.02	260.0	4000.0	2000.0
Վայք						10	3.10	120.0	3400.0	870.0
Տավուշի մարզ										
Բերդ						8	2.60	100.0	2000.0	605.0
Իջևան	1	1.20	503.0	503.0	503.0	17	21.68	530.0	4000.0	1275.0
Նոյեմբերյան						16	14.24	100.0	8340.0	630.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնտեսությունից և հողատեսքերից:

2004թ. առաջին կիսամյակում, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 1731 առուվաճառքի գործարքներ, որից 591-ը՝ աճուրդով, 5-ը՝ դատարանի վճռով և 5-ը՝ ուղղակի վաճառքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	800.0	312.0	312.0	312.0	114	110897.0	250.0	8000.0	2600.0
Ապարան						2	3460.0	250.0	1400.0	335.0
Թալին	1	78.0	2232.0	2232.0	2232.0	10	62180.0	100.0	800.0	130.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	324	359311.0	20.0	2705.0	406.5	75	68427.2	300.0	6000.0	800.0
Մասիս	80	74435.0	210.0	1210.0	770.0	155	124380.0	300.0	20000.0	990.0
Վեդի	72	80400.0	132.0	475.0	332.0	53	52892.0	250.0	2200.0	595.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						32	30809.0	300.0	5000.0	920.0
Բաղրամյան						2	2400.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ	14	7000.0	346.0	346.0	346.0	101	93743.0	300.0	10000.0	1440.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						16	23291.0	300.0	2000.0	580.0
Ճամբարակ								100.0	300.0	140.0
Մարտունի	14	16800.0	66.0	120.0	95.0	12	13600.0	200.0	600.0	250.0
Սևան	6	6800.0	100.0	155.0	130.0	3	2800.0	200.0	2000.0	255.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի						3	3225.0	150.0	600.0	210.0
Գուգարք						11	7889.0	150.0	5200.0	730.0
Մպիտակ						6	8840.0	140.0	900.0	175.0
Ստեփանավան						13	16393.0	100.0	600.0	160.0

Տաշիր						1	1330.0	100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	4569.0	95.0	920.0	250.0	177	165866.0	300.0	10000.0	1725.0
Եղվարդ	25	25000.0	90.0	90.0	90.0	256	282746.0	300.0	10000.0	1915.0
Հրազդան						31	27492.0	300.0	8000.0	1450.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						28	18111.4	250.0	3400.0	365.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք						1	1700.0	90.0	300.0	120.0
Արթիկ	1	30.0	4044.0	4044.0	4044.0	7	3250.0	150.0	900.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1360.0	150.0	1200.0	385.0
Կապան	1	2000.0	30.0	30.0	30.0			150.0	1400.0	410.0
Մեղրի						1	390.0	150.0	900.0	230.0
Սիսիան						2	2400.0	150.0	900.0	245.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	39	48300.0	50.0	340.0	90.0	6	6473.0	150.0	2200.0	305.0
Վայք	2	8560.0	515.0	725.0	620.0			170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	5	2800.0	152.0	480.0	400.0	10	7550.0	150.0	2200.0	585.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 90 գործարքներ 71.72 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 45-ը՝ Արարատի/11.62 հա/ , 4-ը՝ Արմավիրի /5.50 հա/ , 7-ը՝ Շիրակի /6.66 հա/ , 7-ը՝ Վայոց Ձորի/1.57 հա/ , 17-ը՝ Տավուշի /25.55 հա/ , 2-ը՝ Արագածոտնի /13.08 հա/ , 2-ը՝ Սյունիքի / 4.20 հա/ , 4-ը՝ Գեղարքունիքի /2.06 հա/ մարզերում և 2-ը՝ Երևանում/1.47 հա/:

2004թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ հանրապետությունում իրականացված 4453 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 39.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 61.8%-ով , իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել՝ 28. 4%-ով:

2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 334 բնակարանների, 133 անհատական բնակելի տների, 1292 հասարակական, 138 արտադրական նշանակության օբյեկտների, 2534 միավոր հողերի, 1 այգետնակի և 21 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2004թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 219 վարձակալության գործարքների քանակները, 2003թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել են 64.6%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 12.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալվել են 10110.49 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 99.29 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 9426.40 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության , 129.70 հա բնակավայրերի, 237.11 հա արդյունաբերական օբյեկտների, 11.95 հա անտառային, 144.51 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 12.81 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր, 9.72 հա էներգետիկայի օբյեկտների և 39.00 հա ջրային հողեր: Հողերի

վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Արագածոտնի մարզում՝ 2659.62 հա, որից 2645.60 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 3415.74 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	9	1065.00	236	1580.60
Արարատ	12	1480.00	183	514.66
Արմավիր	0	0.00	79	909.23
Գեղարքունիք	25	440.20	200	854.08
Լոռի	1	2.00	97	453.41
Կոտայք	5	376.54	142	380.64
Շիրակ	3	52.00	111	294.44
Սյունիք	0	0.00	92	446.59
Վայոց Ձոր	0	0.00	97	478.26
Տավուշ	0	0.00	21	98.74
Ընդամենը	55	3415.74	1258	6010.65

2004թ. առաջին կիսամյակում վարձակալության գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3497 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 71.6%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 21.8%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 38.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /41.4%/, հողերի /19.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.3%/, և առանձնատների /14.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1713 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 71.6%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 24.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 486.27 հա /այդ թվում 3.12 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 475.88 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 202.94 հա, որից 200.82 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. առաջին կիսամյակում գրավադրման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում

2004թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 159 և 62 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5%: 2003թ. առաջին կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 39.9%-ով, իսկ 2003թ. երկրորդ

կիսամյակի համեմատ՝ 13.3%-ով: 2004թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 35.3%:

2004թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2004թ. առաջին կիսամյակում, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 7653 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 88.0%-ով, իսկ 2003թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 21.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /39.1%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն